ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2020ԹՎԱԿԱՆԻ N 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ>> ՀԿ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.09 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԽՈՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշման դրույթներով, հաշվի առնելով <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀԿ-ի կողմից լիազորված անձ՝ Արման Ավանեսյանի 09.03.2020թ.-ի դիմումը, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին ***որոշում է.***

1. Տալ հավանություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի առաջարկվում է համայնքի վարչական տարածքում գտնվող <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀԿ-ի սեփականությունն հանդիսացող <<Բնակավայրերի>> նպատակային նշանակության, <<Հասարակական կառուցապատման>> գործառնական նշանակության 0,09հա մակերեսով (կադաստրային ծածկագիրը՝ 09-047-0101-0162, վկայական N09032020-09-0028) հողամասը փոխադրել <<Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության>> նպատակային նշանակության՝ <<Գյուղատնտեսական

արտադրական օբյեկտների>> գործառնական նշանակության՝ <<Սպանդանոց>> կառուցելու նպատակով:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել համապատասխան հողաշինարարական գործ և օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման հանձնաժողովի քննարկմանը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ**